## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 11-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Նոյեմբերի 7-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Սուրբ Պատարագ, որի ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և գահակալման 11-րդ տարեդարձի կապակցությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

Այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբվել էին թեմակալ առաջնորդներ և միաբաններ՝ շնորհավորելու Նորին Սրբությանը և աղոթք առաքելու առ Բարձրյալ Տերը՝ ազգընտիր Հայոց Հայրապետի կենաց արևշատության ու քաջառողջ հովվապետության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության ու անսասանության համար:

Մինչ մաղթանքի արարողությունը պատարագիչ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը Մայր Աթոռի միաբանության անունից երախտագիտության և շնորհավորանքի խոսք ուղղեց Նորին Սրբությանը: «Սուրբ Էջմիածինն իր գահակալով այն մշտաբուխ, կենսատու աղբյուրն է հայության, որ բխեցրեց մեր Տեր Հիսուս Քրիստոս: Փառք ու գոհություն անճառելի և նախախնամող Աստծուն: Փառք, որ մեզ դարձրեց իր ժողովուրդը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի աղոթասաց խնդրանքով Քրիստոս Իր էջքով և աստվածային փառքով լուսակերպեց Հայոց երկիրը, Արարատյան դաշտում գտնվող վաղարշապատյան Սուրբ Էջմիածինը: Այստեղից է Մայր Աթոռի հոգևոր իշխանությունը ձգվում-տարածվում բոլոր այն վայրերը, աշխարհի այն կողմերը, ուր կան հայածին, լուսավորչական ժողովուրդ և հոգևորականներ: Անկախ իրենց դիրքից և աստիճանից բոլորն անխտիր կապված են Սուրբ Էջմիածնի Աթոռին և նրա գահակալ Հայրապետների իշխանությանը, ովքեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի հաջորդներն են: Նրանց անխախտ և անվերապահ իշխանությունն է հայի աղոթքի տները հաստատել, բարեկարգել, կանոնական սահմաններում պահել, պակասը վերացնել», - իր խոսքում նշեց պատարագիչ Սրբազանը:

Մաղթանքի արարողության ավարտին ներկա ժողովրդին և եկեղեցականաց դասին իր օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Նոյեմբերի 9-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի նահանգապետ Վասիլի Գոլուբևի գլխավորած պատվիրակությանը: